

աշխատավարձը 1,300 դրամ :

Այս պատահական հաղորդագրութեան մէջ գրչադրի նիւթական դնահատութեան մասին որոշ դադարիար կազմելով հանդերձ կ'իմանանք նաև ուրիշ յոգնահանգնար նկարչի մը մասին, որ թերեւս Պիժակէն ալ բարձր արժանիք ունեցած է, եւ մեներ է գործը չլրացուցած : Ահա՛ս :

* * *

ՄԵԾ ՎԱՐՊԵՏՆԵՐ ՄԵՐ ԴԱՍԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ Մէջ

Հ. Ղեւոնդ Ալիշան իրաւամբ կը նկատէ, թէ՛

«Բազում անգամ անանջատ են յարուեստս ձեռագրացն երկոքին ճարտարութիւնք գրչուքիւն եւ նկարչութիւն որք բազում այն է ԾԱՂԿՈՂՔ եւ ՈՍԿՈՂՔ կոչին եւ յայսմ արուեստի դերագաննեալ երեւին Սիսուանեայք քան զոր է Մեծ Հայս» : (Սիսուան, էջ 517) :

Լուսահոգի մեծ Մխիթարեանը Հայաստան ճամբորդած չլինելով թուի թէ տեղեկութիւն չէ ունեցեր այն մեծ հարստութեանց մասին, որոնք պահուած են Էջմիածնի մատենադարանի մէջ : Դասախօսութեան համար սահմանուած ժամանակը թոյլ չտար ինձ աւելի երկար կանդ առնել այս մասին : Կը յիշեմ միայն քանի մը անուններ :

*

Հաւուց Թառի միաբան ԻԳՆԱՏԻՈՍ : Ասոր գործերէն մէկ աւետարան՝ ՉՈՅԼ ՈՍԿԻԱՊԱՏ ԿՈՂՔՈՎ, երկար ժամանակ գտնուեր է Հոռոմոսի մէջ :

*

ԹՈՐՈՍ ՏԱՐՕՆԵՅԻ. անջնջելի է խոր ըսքանչացման տպաւորութիւնը, որ կը մնայ իմ մէջ մինչեւ վերջ եւ որ ես ստացայ 1918 սեւտարին Էջմիածնի մէջ երկար զմայլանքով դիտելով հայ հանճարեղ այս նկարչին գործը՝ շարք մը սուրբ գիրքեր : Թորոս Տարօնեցին ինձ համար՝ իր նմանը չունի, հայ արուեստագէտների մէջ : Նա մեծ է եւ անզուգական :

Այս վարպետին ընտրած նիւթին նկարչականութիւնը, անձերը խմբաւորել եւ դասաւորելու մէջ խելացիութիւնը, բնութիւնը դի-

տելու սրատես կարողութիւնը եւ հոգեկան ապրումներու խորունկ ընդունակութիւնը զմայլելի են :

Թորոս Տարօնեցին մէջ աչքի կ'ընկնի՝ է մէջ այլ յատկութիւններու՝ կնոջ նկարիչը... : Ես երբեք չեմ տեսած վարպետ մը, որ կնոջ դէմք ու ձեւերու մէջ արտայայտած ըլլար աւելի խոր ու քնքուչ կնութիւն, որքան այս հայ վարպետը կրցեր է :

*

Մլխէ քազուեռու աւետարանի մէջ «Համբարձման պատկերը հոյակապ նկարչութիւն է բարձրօրէն ձեռնհաս մէկ վարպետի որուն անունը չգիտենք... :

*

Յիշեմ՝ այսպէս կոչուած Սաւոյ Աւետարանը, զոր պատկերազարդեր է ԱՐԻՍՏԱԿԷՍ 1169-ին : Մեծ դիրքով հատոր մը, նրբագոյն մագաղաթի վրայ, ոսկեյատակ նկարներով, երկաքաղիւր եւ ձոյլ արծաթ կողով որ ելունդաւոր փանդակապատկերներով աւելի արժեքաւորուած եւ չորս անկիւններումը վարպետորէն հագցուցած մասունքներու բաժնով ի վերջոյ քանգագին գոհարներով ընդելուզուած ամենաքանգ մի յուշարձան է հայ գրքի գեղարուեստին :

Գ. Եպսկ. Սրուանձտեանց տեսեր է զայն Ակնայ Ապուղէիս գիւղի եկեղեցիին մէջ : Ասոր յիշատակարանի արտագրածին մէջ կան միայն՝ իբր արուեստագէտի անուն՝ «ԵՐԿՈՒ ՍԵԲԱՍՏԱՅԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ :

*

Յիշեմ նաև Մեծ Հայոց վանքերու սեփականութենէն Մարկոս գրչի 2 հատոր «Ճարուատիր», շատ շքեղօրէն նկարազարդ, որ կը գտնուին Էջմիածնի մեծահարուստ հաւաքածոյի մէջ :

* * *

ԿԻՆ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Գրքերը դեղադրելու եւ պատկերազարդելու այս քնքուչ արուեստին անմասն չեն մնացած նաև մեր հայ կիները :

Կիլիկիոյ ժամանակագիրը կը գրէ . «Լի եւ անթերի էր իմաստութիւնն յաշ-